

ՆԱԽԱԳԱՅԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՅՍՕՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՍՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ, ԵՎ ԴԱ ԳԼԽԱՎՈՐ ԶԵՌՔԵՐՈՒՄՆ Է»



Մարտի 31-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին երկրի օրենսդիր բաժնագույն մարմնում հանդես եկավ ամենամյա հաշվետվությամբ: Նախագահին իր ելույթում անդրադարձավ բոլոր այն կենսական կարևոր հարցերին, որոնք ծառայած են երկրի առջև:

«Վերջին տասնամյակների ընթացքում ժողովրդի կամքը հիմնականում արտահայտվում էր բողոքի ցույցերով կամ քննադատությամբ: Եկել է մեր իրավունքները դրականապես օգտագործելու ժամանակը, ինչը նախատեսում է ոչ միայն ցանկալի իրականության

ստեղծում, այլև դրա կազմավորում: Զասարակության յուրաքանչյուր անդամ պետք է դառնա որոշում ընդունող: Մարդիկ պետք է միավորվեն, որպեսզի պայքարեն եւ աշխատեն հանուն առաջադրած նպատակների հաղթահարման»,- հայտարարեց նախագահը: Նրա խոսքերով, այսօր իշխանությունները լսում են ժողովրդին, եւ դա գլխավոր ձեռքբերումն է: Այսօր հաճախ հասարակական կարծիքը դառնում է վճռորոշ քաղաքական գործընթացներում, եւ դա բազմիցս հաստատվել է: Դա հնարավորություն է տալիս, որ քաղաքացիներն էլ՝ ավելի ակտիվորեն ներգրավվեն երկրի կյանքում»,- նշեց նախագահը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ 24-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Մարտի 31-ին երկրի անվտանգության վերականգման հանրաքվեի 24-րդ տարելիցի առթիվ, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին տարածեց հատուկ հայտարարություն:



«1991 թվականի մարտի 31-ը կարևորագույն իրադարձություն էր Վրաստանի նորագույն պատմության մեջ: 24 տարի առաջ անցկացված հանրաքվեի արդյունքում, Վրաստանի ողջ բնակչությունը երկրի ողջ տարածքում, Աբխազիան եւ Սամաչաբլոն (Ցխինվալիի տարածաշրջան) ներառյալ, արդարացիորեն հաստատեց, որ ընտրում է ազգային եւ պետական անկախության ուղին»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ: Նրա խոսքերով, հանրաքվեի ցուցարկեց «ժողովրդի անխախտելի կամքը»:

Պիչեցնենք, որ 1991 թվականի մարտի 31-ին, Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի նախաձեռնությամբ (այդ օրը նաեւ նրա ծննդյան օրն էր), երկրում անցկացվեց Վրաստանի անկախության վերականգման հարցով հանրաքվե, որին մասնակցեց ընտրողների 90 տոկոսը: Բացառությամբ աննշան տոկոսների, գործնականում բոլորը քվեարկեցին երկրի անկախության վերականգման օգտին:

«Մենք այսօր ապրում ենք ազատ ու ժողովրդավարական երկրում եւ արդարացիորեն պայքարում ենք եվրոպական ընտանիք վերադառնալու համար: Զավատում են, որ

ՎՐԱՍՏԱՆ-ԶԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ՈՒՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ ՀԱՐՅԵՐԸ

Մարտի 31-ին Վրաստանի բնապահպանության եւ բնական ռեսուրսների փոխնախարար Թեյմուրազ Մուրդուլիան աշխատանքային այցով գտնվում էր Չայաստանում:


Այցի շրջանակներում նա հանդիպում ունեցավ Չայաստանի բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանի հետ: Թեյմուրազ Մուրդուլիան՝ որպես Վրաստանի Օրիոս կենտրոնների տնօրեն, Զա-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՉԳԵՆ ԵՂԻՍԿՈՐՈՍ ՄԻՐՉԱՍԽԱՆՅԱՆԻՆ



Ապրիլի 1-ին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը հանդիպում ունեցավ Վրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եղիսկոյան Սիրզախանյանի հետ:

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը եւ Վրահայոց թեմի առաջնորդը Թբիլիսիի Պատրիարքարանում քննարկեցին վրահայկական կրոնական երկկողմ հետաքրքրությունները կայացնող հարցերը:

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքն իր օրհնությունը փոխանցեց հայ հավատացյալներին ու եղբայրական ողջույնները հղեց Ամենայն Չայոց Գարեգին Բ կաթողիկոսին:

Վրահայոց թեմի առաջնորդը Իլիա Երկրորդին ներկայացրեց Ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ կապված համայնքային ծրագրերը:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՌԱՋՆԹԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵԻՆ ՔՆՆԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԴԱՐԱՅՎԱԾ Է ԵՎ ԱՆԻՐԱՎԱՅԻ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին չարդարացված եւ անիրավացի է համարել կառավարության հասցեյին երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու քննադատությունը: Նշելով, որ պետության ղեկավարը երբեք համազորակցություն չի նախաձեռնել իր հետ:



«Ինձ համար փոքր-ինչ վիրավորական է, երբ մատնանշում են թիմայնությունը, եւ, միեւնույն ժամանակ կառավարության անդամների, կառավարության աշխատանքի հասցեին, ըստ իս, չարդարացված եւ անիրավացի քննադատու-

թյուն ենք լսում մեր թիմի անդամի՝ նախագահի կողմից: Դա շատ ցավալի է ինձ համար»,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին կա-

ռավարության ապրիլի 1-ի նիստում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԴԱՎԻԹ ՌԻՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԳՈՐԾՈՂ ՍԱՐՅԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆ Է»



Մարտի 28-ին անցկացվեց Վրաստանի պետական սահմանադրական հանձնաժողովի նիստը՝ հանձնաժողովի նախագահ, Վրաստանի խորհրդարանի խոսնակ Դավիթ Ռուսուփաշվիլու նախագահությամբ:

հանձնաժողովի նիստում խոսվեց սահմանադրական փոփոխությունների ընդունման համար քվորումի նվազեցման անհրաժեշտության մասին: Քննարկվեց նաեւ մեծամասնական ընտրակարգը տարածաշրջանային-համամասնական

ընտրակարգով փոխարինելու մասին հարցը: Նշվեց, որ սահմանադրական փոփոխությունների ընդունման ընթացակարգը պետք է վերադարձվի նախկին ձևաչափին, որը փոխ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՅԵՐՆ ԷԻՆ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին Բրյուսելում, Եվրամիության կենտրոնականում, աշխատանքային այցի շրջանակներում անցկացրեց մի շարք հանդիպումներ:

Ապրիլի 1-ին Եվրամիության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպմանը Վրաստանի ԱԳ նախարարը քննարկել է Վրաս-

տանի եւ Եվրամիության համագործակցության հրատապ հարցերը, ինչ-պես նաեւ տարածաշրջանում Ռուսաստանի գործողությունները: «Մեր

օրակարգն ամբողջությամբ ընդգրկում էր բոլոր այն ռազմավարական թեմաները, որոնք արտացոլում են Վրաստանի եւ Եվրամիու-



թյան հարաբերությունները»,- հայտարարեց (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

